# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լեռնահովիտ, 077-38-97-83 lernahovit.lori@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Լեռնահովիտ համայնքի ավագանու N 4-Ն որոշումը:

Առդիր 2 թերթ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
Լեռնահովիտ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լեռնահովիտ համայնք, հասցե գ. Լեռնահովիտ
հեռախոս 077-38-97-83

# ՈՐՈՇՈՒՄ

«20» փետրվարի 2017 թվականի N 4-Ն

## ԼԵՌՆԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Լեռնահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Լեռնահովիտ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել 2016 թվականի Լեռնահովիտ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Գրիգորյան Գրիգոր | | | |
| 2.Հակոբյան Վոլոդյա | | | |
| 3.Մանուկյան Հասմիկ | | | |
| 4.Մանուկյան Գայանե | | | |
| 5.Սարգսյան Լեռնիկ | | | |

6.Սուքիասյան Հովիկ
7.Վելիցյան Գևորգ

Լեռնահովիտ համայնքի ղեկավար՝ Գ.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Հավելված N2

Հայաստանի Հանրապետության Լոռու

մարզի Լեռնահովիտ համայնքի

ավագանու 2017 թվականի փետրվարի

20-ի թիվ 4-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Զարգացման ծրագրում նախատեսվել է

1.Մարզամշակութային համալիրի համար գույքի և համապատասխան պարագաների ձեռք բերում.

2. Ներհամայնքային, միջհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում.

3. Սպորտ /հանրամարզության սահմաններում ստեղծել այլ սպորտաձևերի խմբեր,աջակցել համայնքի սպորտային կյանքի և երեխաների առողջ ապրելակերպին:

Նշված ծրագրերից իրականացվել է ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների նորոգում, որի համար ծախսվել է 750000 / յոթ հարյուր հիսուն / հազար դրամ:

1 և 3-րդ ծրագրերի իրականացումը ընթացքի մեջ է:

ԼԵ[illegible]ՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՍՈՒՔԻԱՍՅԱՆ